

կացւոյն գերեզմանին այցելութեան առթիւ կը մղուի գործածել վսեմ աղօթողին աննմանելի լեզուն եւ ատիկա տղարական կապկումի մը կը նմանի: Խրիմեանի գեղջանոյշ կերպերուն բարդած է խանդավառ ու կայտուող շինականի մը աղմկալի եւ կոպիտ ձեւերը, եւ Ալիշանի շքեղ պաշտամունքը հանդէպ հայրենի նուիրականութեանց, Սրուանձտեանցի մէջ եղած է պարզամիտ fetichisme մը, գուարճալի երկրպագում մը հուպիտային ձեւերով: Իր գրականութիւնն այս գեղջկութիւններով լի է:

Բայց եթէ արուեստի հարցակէտը թողլով բարոյական տեսակէտէն դիտենք վիսնեցի վարդապետին գործը, կը գտնենք որ քիչ անգամ հայրենասիրութիւնն ունեցած է այսքան բուռն, այսքան ինքնատիպ, այսքան գեղուն օրինակ մը:

Սրուանձտեանց էսպէս սիրահար մըն է հայրենիքին. անոր անցեալը, զոր կը գտնէ աւանդութեանց մէջ, յիշատակարաններուն մէջ, անոր ներկան, զոր կը տեսնէ բնութեան հոյակապ տեսարաններուն մէջ, աւերակներուն մէջ, բարձրու, սովորոյթներուն մէջ, գաւառաբարբառներուն մէջ, Հայր Սրուանձտեանցի սիրտը կը յորդեցնեն խանդաղատանքով մը,

գորովալի յարգանքով, fetichiste քրիստոնէութեան մը աւիւնով:

Նուիրական հայրենիքին հանդէպ այս անգուսպ, անկարգ սէրը սահայն, մերթ ընդ մերթ ծնունդ տուած է բացատրութեանց իրապէս զմայլելի գիւտերու, որք Սրուանձտեանցի գրականութեան տաժանելի անտաշութեան մէջ, կը ցայտեն լի աշուղային բանաստեղծութեամբ, սրտարուխ արուեստով մը ինքնին գեղակերտ:

Հրաշալի Ալիշանէն եւ քաղցրանոյշ Խրիմեանէն բաներ մը կ'երեւան իր մէջ, յոյժ ինքնաբեր կերպով, բայց մեծամասնութիւնն իր գրականութեան ոչ այլ ինչ է, քան Ալիշանի երկին հրաշալիքը քառասլին նախնականութեան մը մէջ, եւ Խրիմեանի ուժին անուշութիւնն՝ յաճախ նողկալի ծայրայեղութեամբ:

Իր Համով Հոտով վարձատրուած է իգմիրեանց մրցանակով, ինչպէս բոլոր գործերն ալ ջերմագին ընդունելութիւն գտած են հայ բանասէրներէն: Վերջերս ամերիկացի հայագէտ մը, Միսիս Վրնկէտ՝ Մամանայ եւ Համով Հոտով հատորները թարգմանեց անգլիերէնի:

(Շարունակելի)

ԼԵՁՈՒԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Գրեց՝ Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ

Ծանօթ է արդէն հայ հասարակութեան որ Երեւանի կառավարութիւնը վերջապէս բարեհաճեցաւ Արեղեանի գործած աւերն ու պղծութիւնը ջնջելու փորձ մ'ընել. ուստի Յանձնաժողով կազմեց որ գեկուցումներ կարդան, գլոխ գլխի գարենն, մանկավարժներու եւ տեխնիկներու կարծիք լսեն, հայերէն ձեռագիրները քննեն, եւն.:

Մի քանի թերթեր հրատարակեցին արդէն Ս. Մարկսականի ըրած յայտարարութիւնը, որմէ արդէն կ'ընդնշմարուի որ զեռ չեն խրատ-

ուած հին փորձէն, եւ մեր զմայլելի եւ միեւնոյն ատեն հէ՛ղ լեզուն դեռ քաշելիք ունի ասոնց ձեռքը... Բայց ինչո՞րը կը տարբերի այս անգամ. Յանձնաժողովը որոշած է եղեր որ յայտնուած տեսակէտները զրկուին արտասահման աւելի քան 20 հայագէտներու (հայ կամ օտար): Ատկից վերջն է որ Յանձնաժողովը պիտի քննէ եղեր, եւ իր եզրակացութիւնը հանէ:

Բայց մտածենք վայրկեան մը: Յանձնաժողով մը որոշումներ պիտի տայ. ասոնք պի-